



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 13

Տ Ա Ր Ա Ր

26 ՄԱՐՏ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրո.	Տարեկան 54 Ղրո.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՓԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ունեւորութիւնը ընել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասր 40 փաւս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صاريان) مطبعه — باب عالی جادوسى ٣٨

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի անսսէսի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Չեռփի, ոսփի ու ոսփի եւ ձեռփի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը և ղրբագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր, Հնկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱԹԱՍԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐՍ.

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկէր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ. Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համալ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵՐԻՏԱՐ

- 2արշը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երազխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկէրի Հնկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՅԷՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ


ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍ.Լ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ.

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանֆ



ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանֆ

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ չէնք, ապրանք և կարասիք:
ՃԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողենաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Հնկերութեանս ղրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՍՆԷ, Հնդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Հնկերութիւնս կ'ընդունի ի դաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ

Գ. Տ ՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏԵՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ն 13

ՇԱԲԱԹ

26 Mars 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յաջողութեան գաղտնիք. (Խմբագրական). — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Գիթիբոս. ցեր. — ԲԱՆԱԳՈՂ ԼՈՒԹԻՒՆՆԵԱՆ : Ապաթար.սց (Բ.սցասեղծութիւն). ՄՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ : Մանիսակից (Արձակ բանաստեղծութիւն). — Վ. ՄՈՄՃԵԱՆ : Հիւանդանոցի նուագահանգիստ : — Սեռալիցներու. — ԶԱՐՈՒՀԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ : Զարմանազան խօսուրտսոյ. — ԼԻԼԱ : Հայու աղջիկ. — ՊԵՏԻԿ : Զուարթ ժամեր. — Զ. Մ. : Լուսերու բաժին : 100,00 Տարի Սառնակոյժի մը մէջ. (Հանրագիտակի բերթօնը) LOUIS BOUSSE. NARD (Թարգմ.) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ամէն ձեռնարկ , ամէն գործ իր յաջողութեան գաղտնիքը ունի :

Ինքզինքնին գիտութեան , և անոր թաղուն նորոյթներուն տուած մարդիկ գիշեր ցերեկ կաշխատին մարդկութեան առջև նոր դուռ մը բանալու , նոր գիւտ մը յղանալու համար , իրենց գիրքը բովանդակ բնութիւնն է , որուն հատորները կը թղթատեն , օգտակար գիտելիք մը , նպատաւոր արդիւնք մը դուրս քաշելու համար անոր մէջէն : Ու կաշխատին , չեն յոգնիր , չեն ձանձրանար , չեն զլուր , այլ կը ՅԱՐԱՏԵԻՆ :

Ահա յաջողութեան գաղտնիքը : Յարասեռութիւն :

Մարդ ո՛ր և է գործի կամ ձեռնարկի մէջ անկարելի է որ խոչնդոտներու , դժուարութիւններու և արգելքներու չի հանդիպի : Ամէն նորոյթ իր դժուարին կողմերը ունի , յուսահատական միջադէպերը ունի , որոնց առջև պէտք չէ ընկերկիլ , քաշուիլ , այլ յարատեւութիւն պէտք է , յարատեւութիւն՝ որ յաջողութեան գաղտնիքն է , բանալին է :

Ինչպէս ըսինք, երբ մարդ ինքզինքը կուտայ ո՛ր է գործի մը, զբաղման մը, բնական է որ չի քաշող նախանձոտներ կունենայ իւր դէմ, որոնք թունաւոր օձերու պէս լեզուին դուրս կուտան ու կսկսին չարակամ լորձունքներ ժայթքեցնել, որպէս զի ջլատեն, ետ կեցնեն այդ աշխատաւորը իր ընդգրկած ձեռնարկին մէջ, բամբասանքը, քաշքշուքը անձրեւի պէս կը տեղայ անոր հասցէին, որ նոր գործի մը ձեռք դրած է, թերեւս օգտակար՝ մարդկութեան։ Արդ՝ երբ նոյն այդ անձնաւորութիւնը առնուի, զգածուի, և աղղուի իրեն դէմ եղած այդ կարգի արտաքին յուր ճնշումէն, երբեք չի կրնար դուրս հանել իր այնքան տաքօրէն սկսած գործը, և արդիւնքը սա կըլլայ որ նոյն այդ անձը կը քաշուի իր աշխատութենէն, գոհունակութեան քահքահներու մատնելով իր հակառակորդները, նախանձոտները։

Իսկ ընդհակառակը երբ կատարեալ մտածումով, գոյէ իր ականջները արտաքին չարակամ բզկիւնին ու անվհատ շարունակէ իր գործը, այն ատեն յաջողութիւնը չը վրիպիր և գործը իր յարատեւ ընթացքին մէջ կատարելութեան կը հասնի ի հեծուկս հակառակորդներու, չարախօսներու, նախանձոտներու։

Մեր այս տեսութիւնը չի փոխուիր ո՛ր է գործի կամ ձեռնարկի մէջ, ըլլայ գիտական, վաճառականական, լրագրական կամ կրթական։

Այս առողջ հիման վրայ առնենք պահ մը լրագրութիւնը, որ մեծ դեր ունի նիւթին տեսակէտով։

Մեր Հայ լրագրութիւնը այսօր թէև նախանձելի վիճակ մը չունի, սակայն պէտք է ըսել որ չեմք վերաբերում մը, զիրար գերազանցելու տենչ մը, փափաք մը կը նշմարուի անոր մէջ, բայց ցաւալի է ըսել թէ՛ չար ոգիով ու չորիւով մղուած։ Մեր մէջ ամէն թերթ գողցես գիտակ ի ձեռին մանրալնին կը դիտէ դէմինը, ու անոր պզտիկ մէկ սայթաքումը, թերթէ մէկ *faux pas* իրեն հաճոյք և քաջալերութիւն կողդէ, իսկ հակառակ պարագային, ուրիշի մը աննշան մէկ յաջողութիւնը մահապառ հարուածի տեղ կը դրուի։

Մենք լրագրապետներս մեր յաջողութիւնը մեր պաշտօնակիցներուն անկման մէջ կը փնտռենք, առանց խորհելու թէ մենք զմեզ կը խաբենք և օր մը կրնայ ըլլալ որ *tour de rôle* ենթարկուինք։ Հակառակը պնդող չի պիտի ըլլայ մեր այս արեւի պէս պայծառ ճշմարտութեան, և արդէն «ես այդ կարգէն չեմ» ըսողը առաջինը պիտի ըլլայ այս անտեղի ունակութեան հետեւող ու միակ ախտավարակը։ Պէտք է միշտ կրկնել սա յանկերգը, «առաջ պաշտօնակիցներս թող յաջողին, յետոյ ես», իրաւ է թէ քիչ մը դժուար է արտասանութիւնը այս պարբերութեան, սակայն յաջողութեան բանալին է, սէռօմը, յաւնաւէն։

Շատ անգամ կը հանդիպինք թերթերու սիւնակներու մէջ զիրար անուանարկող տողերու, գրուած այսինչ կամ այնինչ յօդուածագրէն, որոնց գրկաբաց տեղ տրուած կըլլայ թերթին մէջ, քանի որ դէմինը պախարակելու վրայ կը դառնայ, և սակայն չենք խորհիր թէ, նոյն այդ գրուածքին պատասխանը «Աստուած յաջողէ» ու չպիտի սկսի, ան ալ իր գիտցածը պիտի միտէ, ու արդիւնքը սա պիտի ըլլայ որ ժողովուրդը պիտի գրօնու, և թէ, ընթերցողը երկու հակառակ թերթերուն վրայ ունեցած համարումը պիտի վերցնէ այդ կերպով։

Այս տողերը գրած ատենա միտքս կուգայ ծիծաղելի օրինակ մը, որ կըրնայ պատշաճիւ մեր նիւթին։ Անցեալ շաբթուան Ծաղիկի մէջ Իզմիրի գեղահարաշ (!) երգիծաբանը Յ. Ալիբար, մեծ պահքի օրով, մեր Հանրագիտակին . . . միսը կերած էր։ Այդ տողերը գրողին՝ ինչ և ո՛վ ըլլալը աղէկ գիտնալու համար չեմ ղիշանիր բան մը ըսել, այլ միայն կը ծիծաղիմ։ Բայց դաւով իմ պաշտօնակցիս՝ այդ թերթին վարիչ բարեկամին, չեմ ներեր ու կը ցաւիմ խորհելով թէ՛ իր թերթին մէջ պաշտօնակցի մը ուղղութեան հետ խաղցր-ւիլը նոյն վերը յիշածիս պէս չար նախանձէ աւելի մօտ մտածման մը չէ կարելի տալ։

Արդ, ինչպէս ըսի, յաջողութեան գաղտնիքը յարատեւութիւնն է, անխօսուկ յարատեւութիւնը, որ ինքնին լուռ խթանն է այդ կարգի վայրահաչ բերաններու, ոչ թէ լրագրութեան՝ այլ ամէն գործի մէջ։

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՏԻՐԱՄԱՅՐ ԱՐՈՒՍԵԱԿ ԴՈՒՐԵԱՆԻ

Իզմիրի Առաջնորդ Գեր. Տ. Եղիշէ Եպիս. Ի վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանի Տիրամայրը՝ Տիկին Արուսեակ Դուրեան մեռած ըլլալով նախընթաց Կիրակի, յուղարկաւորութեան տխուր հանդէսը տեղի ունեցաւ Չորեքշաբթի օր, Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ վայելուչ հանդիսաւորութեամբ։

Դուրեաններու համակիր բաղմաթիւ յուղարկաւորներ, մայրաքաղաքիս առեւտրական, սեղանաւորական, գրական ու լրագրական դասակարգերէն, եկած խոնուած էին պատկաւելի Տիրամօր դագաղին բոլորտիքը, վերջին յարգանք մը ընծայելու համար Հանգուցեալին։

Մեռելական արարողութեանց կը նախագահէր ի դիմաց Ս. Պատրիարք Հօր, Կրօն. Ժողովոյ Ատենապետ Տ. Գրիգորիս Արքեպ. Յովհաննէսեան, իր շուրջն ունենալով Տ. Տ. Հմայեակ, Գէորգ, Մկրտիչ Սրբազանները, Ներսէս, Բաբգէն, Տիրայր, Գարեգին, Իգնատիոս վարդապետները և բազմաթիւ քահանաներ։ Իսկ սգակիր կեցած էր դասին մէջ Գատը-գիւղի բարեխրատ քարոզիչ Տ. Ղեւոնդ վարդապետ Դուրեան։

Դամբանականը խօսեցաւ Տ. Բաբգէն վարդապետ, ուրկէ ետք թափօր կազմուելով դագաղը տարուեցաւ թաղին գերեզմանատունը ուր ամփոփուեցաւ Հանգուցեալը իր վաղամեռիկ որդւոյն քով։

Արմաշական Տ. Տիրայր վարդապետ թաղման արարողութիւններէն ետք սըրտառուչ դամբանական մը արտասանեց որ արցունքներ խլեց բոլոր ներկաներէն։

Խմբագրութիւնս իր ցաւակցութիւնը կը յայտնէ Դուրեան Սրբազանի, ինչպէս նաև Դուրեանց բոլոր պարագաներուն։

ՔԻԹԻՔԻՆՈՍՆԵՐԸ !

« Մարդ չպիտի ըլլանք մենք » :

Այսպէս մենախօսեց օր մը մեր մեծ գրագէտներէն մէկը , որուն համար կ'ըսեն թէ՝ աղագայ բան մը ըլլալու . . . խմորը ունի իր մէջ :

Այդ օրէն մինչեւ այսօր , այդ մեծ հեղինակին մեծ խօսքին վրայ երկար բարակ խորհեցայ , թուարանական հաշիւներ ըրի , լայնքին երկայնքին չափեցի ու չափեցի , վեր վար դարձուցի , բառարանները անաչառ քննութեան մը բռնէն անցուցի ե . . . այսօր 1905 մարտ 26 ին միայն հաստատ հանդուժ գոյացուցի թէ՝ աշխարհիս վրայ շատ բան կարելի է , բացի . . . կարգ մը մարդոց մարդ ըլլալէն , որոնք մեծ մասամբ Քիթիքիններէ կը բաղկանան :

Ապահովաբար ամէն մարդ որ այս տղերքը կարդալու պատիւը ! պիտի ընէ , պիտի ծումակէ իր դէմքը . . . , ճիշդ ասն Մաքրի-գիւղի նոր փեսին պէս , որ վերջին թուէնը փախցնելու զժաղգութիւնը կուտենայ : Բայց , ամէն ձմերուկ թէքեր-տաղիներ չըլլար բնականաբար եւ ամէն սրամաու թիւն Մաղիկին մէջ չգտնուիր : Այսպէս ամէն բան երեւոյթէն դատուելու չէ :

Ապահովաբար մարդ է ամէն մարդ :

Ասոր ո՛չ ես ըսելիք ունիմ եւ ո՛չ ալ Վահան Թօշիկեանը :

Բայց մարդ ըսելով՝ ձեզմէ շատեր կրմբընեն կարծեմ , անոնք՝ որոնք , գիտեն թէ այբէն վերջը բնն կուգայ , թէ Ռուս եւ Ժաքոնական պատերազմը քանի՛ մալ եղաւ Ժաքոնի , ո՛վ է Ժիւլ Վէրն , Այվազեանը ինչո՞ւ Աբրահամ է , Հանրագիտակը երբ կեւլայ , կէս օրը քանի՛ն է , Աւետարանը ինչ կ'ըսէ՝ երբ դրացիիդ ունեցածին աչք տընկիս . . . Լիլան ո՛վ է , Սիււտարի մէջ քանի՛ եկեղեցի կայ եւ մէկ եկեղեցին քանի՛ մարդ , ինչ պիչիմ տղայ է Ս. Երկանեանը , ո՞րն է երկու չարեաց փոքրագոյնը , ինչպէ՞ս քիթ խնջելու է , Բասթէօն եւ Ռուբէն աղան ինչ հեռաւորութիւն ունին իրարմէ , երեք անգամ հինգ քանի՛ կընէ եւ դեռ շատ մը անհատում գիտելիքներ , որոնք այս մարդիկը ,

Քիթիքինները , մարդու կարգ անցուցած են եւ որ ամէնէն անհանդուրժելին է , քիթիքի-նսաբար մէկ մէկ տասգալոգներ կտրած են մեր գլխուն , եւ իրենց հաշուոյն՝ զլուխդ , եթէ տէրը չըլլաս , արդու-կեւլու վսեմ պաշտօնը ի գործ կը դնեն անձնուիրաբար :

Անհանդուրժելի , անտանելի եւ անմարսելի են , մէկ խօսքով , այս տեսակ մարդիկը , որոնք կրնան աշխարհի շրջանը ընել . . . խօսքով , բայց իրականին մէջ ճանճ մը որ սալու համար , քովի դրացիին խորհուրդ հարցնելու կը վազեն :

Ամէն բանի մէջ կը մանան եւ ամէն քարի տակէ դուրս կեւլան : Մէկ բան մը շատ աղէկ գիտեն , ուսելու արուեստը , գիտեն թէ աղէկ թուզը Իզմիրէն եւ գնազանց պամեան Ամասիայէն է որ կեւլայ , թէ Վիլլի-լուի շոքրան աշխարհիս ամենէն գերազանց ամենէն անուշ եւ ամենէն հիւսնալի շոքրան է , որ Զուլցերիայէն յատկապէս կը բերուի , եւ որուն համը կրնայ գաղափար մը տալ որքայութեան քաղցրութիւններուն եւ կնկան անուշութիւններուն վրայ :

Չգիտցածնին չկայ եւ գիտցածնին թերթի մը չորս երեսէն անդին չանցնիր :

Աւտուն , Քիթիքիսը , դուրս կեւլայ տունէն , կը վազէ մօտակայ սրճարանը , չունչը կտրած՝ ուշ մնացող դպրոցականի մը պէս :

Մուտքը հանդիսաւոր է սրճարանին դռնէն ներս :

Նախ երկու կողմը նստող սիրացունները գլխու թիթեւ շարժումներով կը լարեւէ : Իր որոշեալ տեղը ունի սրճարանին մէջ , եւ հոն նստողը , եթէ մէկը նստած է սխալմամբ , անմիջապէս կեւլայ , տեղ բանալու համար Քիթիքիսին , որ սրճարանին ամէն բանն է :

Սուրճը կուգայ , առաւօտեան թերթ մըն ալ մէկտեղ :

Ժամ մը ամբողջ ատով կզբաղի մեծ երկիւղածութեամբ եւ գէմքի խոր ու հիացիկ արտայայտութիւնով մը : Կարծես թէ Աւետարանէն գլուխ մը կը կարդայ :

Հանդիսական կէս-Քիթիքիսները խոր լուռութիւն մը կը պահեն ամբողջ այդ ընթերցման ժամանակամիջոցին , ուրկէ վերջ Քիթիքիս աղան թերթը կը ծալէ , սկստը կը շինէ ու կսկսի . . . :

Ալ կը ճառէ, Հիւսիսէն, Հարաւէն, Բոժ-
տէն թլէնաքի շաւառորմիզէն, Ժիրայր Շի-
րակայիկն գիտականներէն, Աստուծոյ ան-
հուն ողորմասիրութենէն, Ձատկին մո-
տակայ գալուստէն, Երուսաղէմի հաշուա-
կան խնդրէն, ինձո՛ք, քեզո՛ք, Յակոբ Տէր-
Յակոբեանէն, և լերջապէս այն ամէն բա-
ներէն՝ որոնք կրնան խօսակցութեան նիւթ
հայթայթել Քիթիբիոսին :

Ականջ կտրած են ամենքն ալ և «Արե-
ւագալ» ի շարական մը ունկնդրողի գէմքը
ունին :

Ու այս այսպէս ամէն օր կը շարունակ-
ուի, անփոփոխ, անայլալ :

Եւ եթէ օր մը հարցում մը ուղղեն ինծի
թէ՛ ինչո՞ւ մարդ չենք ըլլար, այդ հարցումը
ընողին օձիքէն պիտի բռնեմ և պիտի տա-
նիմ հոն ուր Քիթիբիոսները նստած՝ կուսում-
նասիրեն . . . մարդ չըլլալու պայմանները :

Բ. ԼՈՌԻՑԻՆԵԱՆ

ԱՊԱՇԽԱՐԱՆՔ

Գիտեցայի՞ն խոր լուսեան մեջէն,
Երբոր անօրբի մեղմ ձայներ լսուին,
Ընդունէ՛ ո՛վ Տե՛ր : Վերջին մամուլջքն եմ,
Մեղաւորի մը՝ պիղծ ու լալագին :

Հասնող մոմի մը սմոյն յոյսին տակ,
Ծնեազրամ վախով, ես բազկասարամ,
Կ'անօրբեմ Քեզի : Աղօթիս յստակ՝
Վանկերը բոլոր մեղմով եմ օծուած :

Որովհետեւ Դու, մեղքերու ներո՛ղ,
Թոյլ տուի՛ր որ իմ յիմար կիբերուս
Մեջը խառնուին՝ Քու սուրբ ու փրկող՝
Երգերը վսեմ՝ Զղջման օրերուս :

Արդ Զղջման օրը շատեց սահեցաւ,
Հոգիս անհամբեր կ'սպասէ Քու կին՝
Վնուիդ անարկու : Բայց կզգամ տակաւ,
Աղօթիս ժամը մօտեցաւ կրկին :

ՍՏԵՓԱՆ ԽԱՉԱՏՅԱՆ

ՄԱՆԻՇԱԿԻՆ

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Վերջապէս եկար ու դուրս ելար անկոխ
մացառներուն և պարտէզի դալարներուն
մէջէն, սիրուն ծաղիկ :

Կապոյտ գոյնդ ցուցունելով ու զգլխիչ
բոյրովդ լեցնելով միջոյցը, կը դիւթես ու կը
հմայես մեզ, ո՛վ մանիշակ : Քու կախար-
դիչ կապոյտ գոյնիդ վրայ՝ պլպուլները ի-
րենց արցունքի ցօղերը թափած են միաթիք
գիշերուան մէջ, իսկ զգլխիչ բոյրիդ համար՝
բաբախող կոյս հոգիներ իրենց սրտերը մի-
ացուցած են իրարու : Ո՛հ, անբի՛ծ ծաղիկ :

Հովիտներուն ու գերեզմանոցներուն
դալար խոտերուն մէջէն փոքրիկ կապոյտ
գլուխդ դուրս ցցած, անցորդը կը հմայես
ու անոր սիրազեղ աղապատանքին կ'արժա-
նանաս, իսկ երբ կոյսի մը փափուկ ձեռքե-
րը քեզ հպին իր կուրծքին վրայ խոթելու
համար, կը սարսուս, կը գինովնաս պահ
մը, բայց երբ ելլես հոն արբուածքէնդ հը-
մայիչ բոյրդ աւելի՛ դուրս կուտաս ծալ ծալ
թերթերէդ և կերթաս կոյսին տրոփող սըր-
տին թելերուն :

Գիտեմ մա՛նիշակ, թէ դուն բնութեան
անբի՛ծ զաւակն ես, և դո՛ւն ես որ քու
բոյրովդ կրնաս գինովցնել կոյս հոգիները :
Այդուն սոխակը գլխուդ վերեւ կայնած համ-
զրգած է իր մեղեդին ու հոն իր ցաւին
արցունքները թափած է : Գիշերը իր ցօղերը
տարածած է վրադ և վեհաշուք լուսինը՝
ամպերուն ետեւէն դուրս ելած, քեզ դի-
տած է : Աս ամէնը հա՛նելուկ, հովիտներու
անբի՛ծ ծաղիկ, քու անուշ բոյրէդ գինով-
ցած են և քեզ սիրած են անհուն սիրով
մը . . . :

Ո՛հ, կը սիրեմ քեզ, մա՛նիշակ :

* * *

Վայրի հովտաց, անկոխ գետիններու և
պարտիզի դալարներուն մէջէն միշտ կը ժղպ-
տիս դու մանիշակ, և երբ կզգաս հպունքը
հրեշտակի մը պաշտելի ձեռքերուն, է՛ն
նուրբ, է՛ն պղտիկ թերթերդ անզամ կսկսիս

անոր առջև, որպէս զի տանի քեզ իր երկիւղած շրթներուն, որուն փափուկ, տաքուկ համբոյրներէն զգացուելով, կը սարսուռա խորհրդաւոր սարսուռով մը:

Գիտեմ այն վայրկեանին կզգաս թօշնած թերթիկներուդ մէջ թախիծ մը, որ հեշտանքի մը արդիւնքն է անշուշտ: Մեղամաղձոտութիւն մը կայ խաւերուդ մէջ, զոր մարմունն նայուածքներ երբ քեզ յառին, իսկոյն կը ցնցես, նաեւ բոյրովդ կարբշուես:

Բայց երբ այն կոյսը, զոր քեզ կը պաշտէ և երբ ան առանց քեզ նայելու անցնի քովէդ ու արհամարանք մը ձգէ վրադ, ա՛հ, խեղճ ծաղիկ, իսկոյն կը ցնցուիս և կուլաս, կաթիլ, կաթիլ կը թափես արցունքներդ ու համակ տխրութիւն մը կը պատէ վրադ, անկէ զրկուած ըլլալուդ համար — ինծի պէս:

Բազդակից ենք իրարու մանիշա՛կ, որովհետեւ երկուքնիս ալ մէկ զգացում կը կրենք:

Այո՛, կը տխրիս դուն, երբ թախիծը գայ ու պատէ քեզ, և կզգաս թերթիկներուդ մէջ այն վրդովմունքը՝ որ կը չարչարէ կը խոշտանքէ քեզ — ինծի պէս:

Ո՛հ, ըսէ՛ անրիծ ծաղիկ, բազդակից չե՛նք միթէ իրարու:

* * *

Սենեակիս մէկ անկիւնը, բիւրեղեա գեղորի մը մէջ դրած, հոգիովս կը պաշտեմ քեզ: Դուն զիս կսփոփես ու իմ վշտերուս ընկերն ես, երբ դուն խոհեր զիս պատեն, իսկոյն կուգամ ես քու քով և խօլ շարժումներով կը համբուրեմ ու կը հոտոտեմ զգլխի՛ն բոյրդ՝ որ կը մեղմացնէ ցաւերս:

Իեւ կոկոններդ չբացուած, հանդարտ ու անփոյթ էիր, աշխարհ կը բաղձար փունջիդ բացուելուն, զարդն ընելու համար քեզ, իրենց կուրծքին, ու գիշերը անոնց ըղձանքը յագեցնելու համար իր ցօղերը տարածեն վրադ և գգուեց քեզ ու դուն ալ բացուեցար և կոյսերուն զարդն եղար:

Քեզ միշտ պիտի պաշտեմ ես, ու կեանքիս ընկերը պիտի ըլլաս . . .

Ո՛հ, կը սիրեմ քեզ, մանիշա՛կ:

Վ. ՄԱՍՏԵԱՆ

ՎԱՂՈՒԱՆ ՔՕՆՍԷՆՈ

Վաղը, Կիրակի, 27 Մարտ, ժամը 7 ին, Բերայի Թաղապետական Թատրոնին մէջ տեղի պիտի ունենայ Զայնական ու գործական մեծ Նուագահանդէսը ի նպաստ Ազգ. Հիւանդանոցին:

ՅԱՅՏԱԳԻՐԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՄԱՐԾ ՀԱՄԻՏԻԷ

1. Պ. Կօստո, Թրիօ ան ֆա, զոր պիտի նուագեն Պ. Պ. Սէլէլլի, Ալպերթ Պըրաուն և Տ. Իւկօլինի, դաշնակով ջութակով և թաւջութակով:

2. Վեպեր, Կրանտ էր տ'Օպէռօն, երգչուհի Տիկին Հէքէրի կողմէ:

Լեօնաւալլօ, Բրօքս տը Բալիաչի, երգիչ Պ. Հէքէրի կողմէ:

Վերսի, Կրան տիւօ տը Բիկօլէթթօ, Տէր և Տիկին Հէքէրի կողմէ:

3. Հաֆման, Սուվըրի, Պ. Իւկօլինի կողմէ:

4. Թաուզիկ, Ֆանթէզի Հալքա, դաշնակով, Պ. Հէկէի կողմէ:

5. Ժանգօն, Ռէլլերի, Պ. տ'Ալ Օլիօի կողմէ:

6. Սիմօնէթթի, Մատրիկալ և Սարազաք, Զիկայէրվայլըն՝ Պ. Հայկ Կիւտէնեանի կողմէ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1. Տիօրաֆ, Տանս Ուլալ, ջութակ, դաշնակ և թաւջութակ:

2. Մասսընէ, Հէրօտիատ և Տաննա, Պօնթուր Սիւզօն՝ Պ. Արմենակ Ֆնտզիկանի կողմէ:

3. Լից, Բաբօտի Հօնկրուաղ, դաշնակով Պ. Հէկէին:

4. Տ'Ամպրօզիօ Բանզօնէթա և Շուպեր, լ'Ապէլլ ջութակով Պ. Հայկ Կիւտէնեանի կողմէ:

5. Շուման, Տէօ Բօֆանս, քլարինէթով, Պ. Անճէլօ Կօյլիէ:

6. Հօֆ, Նօրաիլ Բօնսէր, Պ. Իւկօ Իւկօլինիէ:

ՍԵՌԱԿԻՑՆԵՐՈՒՍ

Մեր սեռը՝ որուն իրաւունքները բնութեան ամենէն անողոք օրէնքներովն է կաշկանդուած, և որ ենթարկուած է կասէր, աններող մարդիկներու քմահաճոյքին, գէթ այս անգամ իր մասին համակիր վերաբերումի պէս բաներ մը կը նշմարէ Սարգիս Սաքա-
եանի մէկ զրութեան մէջ, զոր Մանգուսի հրատարակեց անցեալները:

Սիրանոյշի նկատմամբ պատահած միջադէպ մը, զարմանալի բան, կրցեր էր գութի ու կարեկցութեան ցօղը կաթեցնել անոր՝ առնական կարծիք սրտին մէջ, ու զայն ներսէն Շնորհալի հարազատ աշակերտի մը վերածեր էր: Զէ՛ մի որ քարերն ալ « ուսանա » աղաղակեցին երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ չարչարուելու համար:

Մեր սեռին պատկանողներէն գրեթէ ամէնքն ալ իրենց կեանքի մատղաչ ու փափուկ չըլանին մէջ յաճախ առիթը կունենան հրեշտակ կոչուելու իրենց տարասեռներէն, ու տարիներ յետոյ երբ ա՛լ իրենց դէմքի վաղանցուկ գեղեցկութիւնն սկսի թառամիլ, ան առնէ « ֆօթօգրֆին » կապած դուրս կը նետուին հոնկէ՝ եթէ երբեք իրենց դէմքի գեղեցկութեան չ'են միացուցած հոգիի գեղեցկութիւնն ալ որ թառամիլ չը գիտեր:

Տեսանելի այդ հրեշտակները սակայն՝

զորո՞ չ'են ունեցած մեր Շնորհալի Հայրապետին հետ, ուստի բնական է որ իրեն անծանօթ մնային նաեւ հրեշտակաց այդ դասէն արտաքսուած սատանաներն ալ:

Երանելի այդ Հայրապետը, անտեսանելի սատանաներուն որոգայթներէն սոսկացի, ու անոնց դէմ պաշտպանուելու համար միայն հեղինակեր է իր մաղթանքները: Ուրիշ մը այսօր, ներսով դուրսով սեւ, փոքրոգի այդ սատանաներուն մէջ աւելի սոսկալիներն ու նենգաւորները նշմարելով մաղթանք մը կը գրէ, և իրաւամբ:

Մեր սեռին մէջ եթէ կայ մէկը որ այդ պիղծ արարածներու « լեզուին թռնաւոր սլաքէն » զերծ է մնացած, թող մատը վեր վերցնէ, վստահ եւ որ օդին մէջ մատ մը խսկ չի պիտի նշմարուի, ու եթէ պատահի որ մէկը յանդգնի մատը վեր հանելու, աչքն ալ մէկտեղ պիտի հանէ՝ անոր համար որ բացարձակ սուտ խօսած պիտի ըլլայ:

Ուստի Քոստիմի և Տէր Անդրեասեանի օրինակին հետեւելով, ահա թարգմանաբար կը դնեմ հոս Սաքաեանի հեղինակած նոր մաղթանքը, որպէս զի իմաստին գիտակ, սրտանց մրմնջին հարազատ և սրտաբուղիս այդ տողերը:

Բերա

ԶԱՐՈՒՀԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Սասիչդ չարեաց, սասեա զգազաեալ ջաջուկս զի մի՛ երբեք գամագիւտ լիցին՝ զամբասիր երիտասարդութենէ իմմէ բարբառելոյ: Հեռացո՛ յինէն զաղտեղի չարաբանութիւնս նոցին, որք առաւել ե՛ւս զարեանոս են՝ քան զփուտ եւ զնեխեալ մարմին իւրեանց: Բեկեալ խորակեա՛ զլեզուս նոցին՝ որք իբրեւ զկարիւս խայթին մահաբոյն: Ափիբեաւն գործեալ կարկե՛ա զբերանս նոցին ոյք բարբառին սափասուտ, զախջախեա « զծօթօղակապ » քանկս նոցին՝ յոր խոնկեալ կան խորհուրդ գարեղիք: Փարսեա՛ զօղ զգիտութեան հոգւոյ նոցին, և արժանի արազնսս հոյ՛ յաւիտեանի զի կ'իզեալ տոչորեցին ըստ չափու աճօրհնութեանց իւրեանց:

Ս Ս.

Ո՛վ չարերը յանդիմանող Աստուած, յանդիմանէ սա ծիծառ ու յնթած պառաւնեքը, որպէս զի չի կարողանան իմ անբիծ երիտասարդութեանս վրայօք խօսելու: Հեռացուր ինձմէ անոնց ազտոտ չարախօսութիւնները, որոնք աւելի գարշահոտ են քան իրենց հոտած ու փտած մարմինը. կտոր կտոր ըրէ անոնց լեզուները՝ որոնք կարծի մը պէս մահուան թոյնով կը խայթեն. պապանծեցուր, կղպէ անոնց բերանը որ բաց է լայն սուտ կը խօսի. ջախջախէ անոնց ֆօթօղակապ գլուխները որոնք լեցուած են զարչելի խորհուրդներով. փարատէ անոնց հոգին ծածկող ողորթութեան քօղը և արժանի բոլոր զանոնք քու յաւիտեական կրակիդ, որպէս զի չարաչար վառին իրենց անօրինութեան չափով:

Չ. Մ.

ԶԱՐԽԱՆԱԶԱՆ ԽՕՍՈՒԸՌՏՈՒՔ

Կարելի է ձենէ շատերը հետաքրքրուին հասկնալու համար թէ՛ մի և նոյն դասակարգէն անհատներ ըլլան մանչ կամ աղջիկ, երբ երկու երեք հաւոր իրար դան, ի՞նչ նիւթի վրայ կը խօսին :

Այս կէտը իմ ալ հետաքրքրութեանս թելերը թրթռացուցած ըլլալուն, բազմամեայ փորձառութիւնս յագեցուցի, և այսօր ուրախ եմ յայտարարելու թէ՛ չկայ գաղտնիք մը ինձ համար, այլ ընդհակառակը, երբ երկու հոգիի քեր-ւա-քիքին հանդիպում, քովերին դանուածի պէս կրնան կռահել իրենց խօսակցութեան նիւթը : Եւ տսիկայ սովորելու համար Օքսֆորտը երթալու հարկ չկայ, ոչ ալ Ֆլամանդիոնի արեգակաւոր զիտարանը աշակերտելու պէտք ունի մարդ, այլ բաւական է մոխրաճմլութիւնը շապիկ ընելու հաղնիլ, ալ անկէ անդին աշխարհի ծոցը բաց կրնաք գտնել ձեր առջեւ :

Նախ և առաջ սկսինք քահանայներէն, որոպէս զի դորժերնիս յաջող ու գրիչնիս սահուն երթայ, քանի որ Աստուծոյ մարդոց յարգանք մընէ որ կընենք հոս :

Թէ ինչ կը խօսին՝ երբ երկու քահանայ իրար դան :

— Ողջո՞յն . . .

— Ողջո՞յն . . .

— Ո՞ր ասանկ տառուանց կանուխ . . .

— Սուս եղիր եղբայր, անկարեայ . . . մեր գործը ի՞նչ պիտի ըլլայ ատկէ վառ . . .

— Խե՛ր է ինչալլահ . . .

— Սըտեղ աղքատիկ հիւանդ մը կա՛յ տէ, վրան գիրք կարդալ կերթամ կոր . . . հարսնիքի ըլլայ նէ դուռս ձեռք չեն առներ քի . . .

— Շարաթ օրուան մառելին փարաները ասի՞ք դուք . . .

— Թաղ. Խորհուրդին հետ հիսապնին տեսեր են ամա՞ . . . տահա ծան ծուն չեւաւ . . .

— Ընկերներն չաղանող կայ գիտես քի տըլոր . . . մարդիքը մեզի պանքէութի տեղ դրած են տէ, տէրտէրներուն փարան ետքի

մնաց, ըսելով առաջ իրենց սնտուկը տէօ-չէթմիշ կընեն կոր . . .

— Անցած տարուան թագաւորին մեռելէն գիտե՞ս եա . . .

— Տահա թագէն կայ . . . երեքշաբթի օրուան կնուէրին, սահաթներով պահարանը չիլի կարեցի, հանեցին ծառքս երկու չէյ-րէկ դրին . . . էյ հիմա բազարըլըս չպիտի ընեմ եա՛ . . . միսը տասնը մէկի չեղար նէ ան ալ չէի առներ . . . ի՛նչ ֆայտա քի . . .

— Զէհիրի պէս ալ հալա մը, հայտէ Տէր ընդ ձեզ . . .

— Հա՛ ինծի նայէ, . . . աղան հոգեւ-վարք է եղէր, տէրտէր ուղեւու ըլլայ նէ ինծի չի մոռնա, գիտես եա՛, Խատիգեղի հարսնիքին քեզի խապար զրկողը ես էի . . .

— Հա՛, հա՛, հոգդ մընէր . . .

Վարձապետները :

— Զէ՛ . . . չըմբռնեցիր միտք բանիս . . . անոնց միտքը տարբեր եղրակացութեան մը յանգիլ է . . .

— Էյ աղէկ ամա ի՛նչ բան գիրենք կարգելէ . . .

— Գրագիրը իր կողմէն լիազօր վէքիլ է . . .

— Եղբայր, առտուանցով քեզ հետ քա-չէնք Գառկիլի . . .

— Սիրելիս, վարձուրանէն անգան ճամբեց, տարակելով ի՞նչ բեյ է . . .

— Աս աղուն անո՛նը Առաքե՛լ է . . .

— Կամ Առաքել կամ Ֆուսանկիլ է . . .

— Բաղմապատկէ կըսէի իրեն, ան հաս-կընար calculer . . .

— Խերը տես կիւլի կիւլի . . .

— Ինչուս պէտք, ձայնը աղուոր էր, անո՛յ կերպէր « պիւլիլիլ օյլամ կեօնիլ վէրսեմ պիլ կիւլի » . . .

— Հիմա տառնք ձգէ տէ քառորդ մը փոխ տուր չէլէ . . .

— Ու ըսել թէ՛ մար ուսուցիչները վարձապետ խափալը են, հէ՞ . . .

Վարժուհիները :

- Պօն ժողով հոգիս . . .
- Օ' . . . Պօն ժողով անուշա . . . ո՞ր կողմ ասանկ . . .
- Ո՞վ որի՛ պիտի հարցնէ . . . հազիւ այսօր ժամանակ ունեցայ անձնականիս համար գնումներ ընելու . . .
- Բաղդաւոր հոգիս , ըսել է՝ . . .
- Ձէ խուշս կարծածիդ պէս չէ . . . դեռ փետրվարը չեմ աւած . . .
- Հէլէ՛ հէլէ՛ . . .
- Սուտ չեմ խօսիր գիտես . . . բայց կարծեմ վաղը Ատենապետը բան մը պիտի ընէ . . .
- Հա՛ . . . աղէկ որ հանդիպեցայ La Jambe nueն ունիմս արդեօք . . .
- Դիրքերուս մէջ նայիմ , կարելի է որ ունենամ . . . բայց այդ դիրքը . . .
- Անմիջապէս տարբեր մտքերու կը տանիս , ինծի համար չէ՛ հոգիս , ուրիշ մէկը ուղեց և . . .
- Ախ . . . բոլորը կը հասկնամ . . . բաղդաւոր խոշիկ . . .
- Ախ . . . գիտեմ որ բան մը պիտի ըսեմ . . . միւսիւ Բարսեղին հետ ինչպէ՞ս եղաւ գործերնիդ , գիտես որ քեզմով կը հետաքրքրուիմ . . .
- Անուշա , իրաւ թէ մենք վարժուհի ենք , սակայն հասարակ օրիորդներէն մեծ տարբերութիւն մը չենք ցուցներ , մինչդեռ այն վարժապետները . . .
- Քեզի չըսի՞ հոգիս . . . այդ կարգի մարդոց հետ յարաբերութիւն մի հաստատեր . . . ես գիտես որ փորձաւոր թեմա կը խօսիմ . . .
- Գրած նամակներդ . . .
- Երեւոյ հոգիս , չինձու , էն աղէկը միւսիւ Կոմիտասը չէ՞ր . . . գիտես ինչեր ըրաւ , և խնդիրը մինչև անգամ աղոցը բերանը իյնալով , թուարանութեան լուծման պէս տախտակներուն վրայ անուններս գրեցին . . .
- Ա՛ . . . մնաս յարով լուրէս , տնօրէնը , անօրէնը կուղայ կոր տիկինին հետ , զմեզ չի տեսնայ , վերջէն կասկածներու կը . . .
- Ախ . . . օ՛ որվառաւ , բոսձ գիրքս չի մոռնաւ , պլաթիկի մը հետ զրկէ . . .
- Հիմա . . .
- Ուրիշ թէ՛ մեր վարժուհիները մայրապիտաներու պէս կ'աղբին , հէ՛ . . .

Ոսկերիները :

- Բարե . . .
- Ասծուբարին , կէնէ հանդըն խուլէսին սէքէթ է կախէր , աս ի՞նչ է , երկու ձեռքդ լեցուցեր ես . . .
- Աժան գտայ նէ չը դիմացայ , դուռը եէթմիշ փարայէն վար չեն ի տար կոր . . .
- Ամա չիրա ըլլալու չէ գիտնալու . . . նայիմ . . . հա՛ . . . թաղէ է եղեր . . .
- Բաստրմա պիտի աւանդ տամ , չիմտեմ քի գուշ էթի պիտի կրնամ գտնալ . . .
- Սուս աղբար , էրէկ իրիկուն միտեալիի մը ըռաստ եկայ քի . . . նա՛ ամէն մէկը զոքանչիս թէպիկին խտար կար . . .
- Սուրբուխիդ թէնէքէն , նասըլ ծանտուա . . . իմա մէկ երկու շաքաթ տահա կերթայ գիտնալու . . .
- Հարցուցած չունիմ ամա , ունենալու եմք . . .
- Մերիններն ալ էնկինառ ուղեցին ամա , պիւր միւնքիւն չեմ կրնար կոր առներ , վաթսուս փարա աղբար , հէ՛մ ալ մատնոցի խտար բա՛ւեր . . .
- Ծօ՛ աղէկ միտքս ինկաւ , թաթար պէօրէիին թէրթիպը պիտի տայիր . . .
- Էյ հիմա՞նկ վախիթ չունիմ , պաշխա վախիթ . . . դուն ինձի տուած բախլայիդ տեղը ըսէ տէ չըրալը խրկեմ առնել տամ , աչքս մնաց . . .
- Կէզարիի՞նէն աւի , պէ ախպար , ան աս մեր միսը կուտեն քի , խոյուածիները ամէն բանին աղէկը կուտեն տէյի , հէլպէթտէ , չիւնքիւ , մենք ճամբան , լաղարը քալած առնենիս , անոր տուր կնկանը , քոջը երեսն ի վեր հէրեսան չենք չըլլար , մեր աչքը սրալարտի շարուած քիւֆէներուն կը տնկենք , ոտակիքին աղէկը կը գտնանք , ան թախում մը դիւպղէները անցնող կնկանը բէշին թիւիզը տիխաթ պիտի ընենք ըսելով , տուն երթալու ըլլա՛ննէ , մահալլէն հանուած թիւքեան պայաթին կը նստին կուտեն . . .
- Հախ ունիս աղբար , ինչ ըսեննէ ըսեն , ճան պողաղտան կէշինիւր . . .
- * * *
- Հասուն աղջիկներու տեր մայրերը :
- Փարան մէջկս կը կոյրէ կոր փարան , հանի կա՛յ ես , երկըմ պան եղաւ աս թըրախուման . . .

— Սուս քուրուկ, մէկ ծարն ալ իմ կը-
լորս է, պիլլուռներու կտոր աղջիկս մամուկ
դարձաւ պատն ի վեր, ըսման տըրման
ըսող չիկայ, երկու տարիէ չորս չիֆթ բո-
թին հինցուցինք, մարուռ աղջիկ ժամ եր-
թալով քի պէլքի մէկը կը տեսնայ տէ խըս-
մէթ մը կեւլայ տէյի . . .

— Հախ ունիս, ես ալ պաշխա եօլ մը
պունեցի, ամիսը մէյ մը պազնիք կը տանիմ
կոր, քի հոն տեղը պալմոմներու կտոր
վճուտը տեսնան տէ, պէլքի պէրնէ պէրան
չալ կըլլայ տէյի, ամա կանակնիս քէսէ
սապօնէն հաղը պացուցաւ, տահա դու-
ռիս չախնախին ծանը անկճիս հասած չու-
նի . . .

— Բեզի բան մը ըսեմ քուրուկ, կիւ-
նահ բան ալ կընենք կոր ամա, ծառքերնիս
բան չիգայ եողսամ . . . ինչ ընելու չընելու
մէկուն կըլիսը հանելու է . . .

— Ընէ . . . ատանկ ըռտտակէլէսին
հանեմ տամ նէ, թավչանի պէս ամիսը մէյ
մը պերէմ նէ տեղաւորցնելիք տեղ ունիմ . . .
եօխսա ըլլալէն ետքը պէլլի պաշլը մէկը
ըլլայ . . .

— Հա իմինքս չըմէնտըֆէսի պիլէթճի
մը ուզեց տէ, զէնահաթը խաղալը է տէյի
ճուղապ տուի, քա մարիկ խենթ խենթինէ
խառապաֆօտին կացած վախթը սիւլիկի
պէս բէնճիրէնէրէն ներս պիլլէթ պիտի ծակէ,
եա՛ ոտքը խայմիչ ըլլայ նէ . . .

— Վո՛ւյ . . . վայնէ հալուն . . . էյ չէ,
ըլլալիք պան չէ, աղեկ մտմտացեր ես . . .
ես ալ չէյի ի տար, ատ ո՛ր տղան է քի . . .
ո՛ւր կը նստի . . .

— Կա՛յ ես եաման պան ես, սանքի
ուռուռիզով հասկնաս տէ դո՛ւն պէճէրուիս
տէյի է ըսածդ . . .

— Չէ՛ . . . վրաս բարի, աչկս կուչտ է . . .

— Խապահաթը իմս է քի, բամպուխ
պէօրէյի պէս թուլ թուլ դուրս կուտամ
սըսըս . . .

— Բեզի բան մը ըսեմ . . . քեզի հետ
ալ լախրուտը չըլլուի կոր . . .

— Չէ՛ մի քի երկուքս ալ աճ սոթիբճի
ենք, չի բ՛նէ կրնեմ վէսէլում . . .

. . .

Մայիֆաբուռ աճիկները .

— Նա վրայէն քոնէ կարդացի՛ր ինչ է
գրեր նէ . . .

— Տեյի մէյիին գրածը էն չիտակը ըլլա-
լու է, տահա պիտի քչուի ըսեր է եղէր . . .

— Հայտէ ճանըմ գին ջունին ալ առեր
են . . .

— Մօ աճապ ի՛նչ խըյախ տեղ է եղեր
քի գին չուերի տէյի անուն գրեր են . . .

— Ծառօններուն պաշ խումանտարըն ալ
սալըլըր ֆուռթունա ըլլալու է քի խազէ-
թաներուն մէջը օ եաման կը գրեն կոր,
ո՛վ գիտէ եաման է եղեր . . .

— Իմ խաֆայիս նայիս նէ պարը կէօ-
րուչ պիտի ըլլայ . . .

— Զիճի շէնպօյն ալ ատանկ է գրեր,
Աստուած տայ . . . ինչ ըսեմ . . .

— Անչէ՛ ամա սօխը քանի՛ր կառնես կոր . . .

— Եէթմիչ փարայ, աս տարի ինչ ե-
ղաւ չիցտեմ, սօխ մընէ ամա էն պէտքի
բանն է կերակուրին մէջը . . .

— Ես ամառուրնէ առած էի տէ խապար
չուրիմ . . .

— Աման ինձի ձգէ տէ աս օրուան կա-
զէթան կարդամ, տահա թէլէկրաֆները աչ-
քէ չեմ անցուցեր . . .

. . .

Հայ-լայն Տիկիկները .

— Ա . . . աղան Պէօյիքտէրէ՛ կուզէ կոր
այս տարի, բայց ես Մեծ կղզին կառաջար-
կեմ կոր . . .

— Մենք ալ չիտակը ատանկ միտք մը
ունինք, բայց տեսնենք ինչպէ՛ս կընենք,
բայց տուները չեն յարմարի կոր, այս ան-
գամ ամուսինս համոզեցի որպէս զի Մեծ
կղզի տուն մը չինէ մեզի յարմար . . .

— Աս ալ կըլլայ, մենք չալէ մը չինե-
լու միտք ունինք, բայց հոտ ալ չնորճող
տեսութեան մարդ չենք կրնար կոր գտնել . . .

— Այո՛ . . . մանաւանդ բօքեռի համար
քառէ մը կազմելը շատ դժուար է . . .

— Հապա՛ . . . մարդ ցերեկները, մա-
նուտնդ կիրակի օրերը ինչո՞վ ժամանակ
անցընէ կղզին մէջը . . .

— Ձեզի համար աղէկ է Տիկին, չան-
սերնիդ շատ բարձր է . . .

— Օ՛ . . . անունն է եղեր, մինչդեռ . . .

անցեալ գիշերը քառասուն ոսկի մէկ պլըծին տուի . . .

— Ձմեռուան վաստակնուտ տոկոսը անգամ չէ Տիկին, ես որ ամէն նստելուս կուտամ . . .

— Վախկոտ կը խաղաք Տիկին, այդ է պատճառը, և կարծեմ ձեր ամուսինը քիչ մը . . .

— Ո՛չ . . . ընդհակառակը, ան չի խօսիր, և կատիպէ որ խաղամ, բայց շանս չունիմ, շանսը գիտէք որ մեծ դեր կը խաղայ բօքսի մէջ . . .

— Այս տարի ձեր ամուսինին հետ ընկեր դացէք Տիկին, անիկա ձեր բացը կը գոցէ . . .

— Կըլլայ ինչու չէ՞ . . . Սպասաւորներնուդ հետ ինչպէս էք . . .

— Այդ կէտն ալ կարգադրեցինք, մէկ ու կէս ոսկի աւելցուցինք, որպէս զի գիշերները բօքսին համար նստի և սպասարկէ . . .

— Ադ ինչո՞ւ . . .

— Որովհետեւ մինչև կէս գիշեր և կամ երկու ժամ անցած կը նստինք, մարդիկը չեն դիմանար կոր . . .

— Ես ուրիշ սակարկութիւն ըրած եմ, վաստակիս հարիւրին հինգը Կիրակոսին կուտամ, զարմանալի չէ՞ . . .

— Էյ քանի որ չեմ չափի կըսէք, ինչպէս կըլլայ այդ սակարկութիւնը . . .

— Կիրակոսը զիս կը յարգէ . . .

* *

Ժամկոչները :

— Սահակ աղբեր, ի՞նչ թարով . . .

— Աղային խանութը բաղնիք տի երթայ, ասեց ուր պօխճան տանիմ . . .

— Ծէօ՛ թօֆաֆ կասես, տիւն պօխճածի՞ ես . . .

— Օր աղան հրամայեց ամէն բան տի ըլլիմ, որ քեզի ասէր չի՞ տի ասնէիր . . .

— Ամէն իժիբ ի՞նչ ժամ գայ իսէ մինտէր կու վազցինիմ, ինչ պախչիլ կուտայ իւր . . . ևս ժամուն մարդն իմ բաղնիք ու չախ չիմ ուր . . .

— Կամայ ասէ ծէօ, երին դուլաղը վար, որ աղանիւրէն միւկը իմայտ՞ւ իսէ, բանըդ բխսած է . . .

— Ան աղա ուր ըլլի իսէ, ժամկոչին

կնիյին բաղնիք պօխճան թաշուրմիշ չանէր, ան թէօղ աղայութիւն ընէ իւր, ևս ալ իմ գործս գիննամ իւրայէթ անիմ . . .

— Ան շինանայ շախբալու մատաման քեզ քանի՞ փարայ տուեց . . . չիտակ ասէ . . .

— Ամէն իժիբ երկու զրուշ ափս կու դնէ, խուռպանն ըլլիմ . . .

— Ան ալ աղաներուն կնիյներէն մին է գիննալս . . .

— Ըտի ի՞նչ լաֆ է ծէօ . . . աղաները քանի՞ կնիյ կիւնենան ուր . . .

— Իշ գիննամ աղբեր, որ սիւսիւ մատաման իւր կուգայ իսէ, ևս ծնիքիւէրի կնիյիմ կասէ, ևս ալ շաշուրմիշ կանիմ կը մննամ . . .

* *

Թերթի տնօրէնները :

— Բարեւ բարեկամ, ինչպէս կերթաս կոր, մանտա-բօսք ստացած ունի՞ս դուրսերէն . . .

— Ասծու բարին սիրելիս, երանի թէ այդ գաղիեէրէն բաւը չի գործածէին դրամի ըստացագիրներու համար, որովհետեւ այդ անունին առջի բաւը մանտա, կարծեմ դանդաղ ըլլալուն, մենք ալ մեր բաժանորդներէն դրամի երես չենք տեսնար կոր . . .

— Բայց գիտցիր որ մանտա անուն կենդանին ուժով ալ է . . .

— Այո բարեկամս, մեր սերմայէն մէկ անգամէն քաշել տանելու համար . . .

ԼԻԼԱ

ԳՈՀԱՐՄԱՏՆԵՆԻԿ հայ աղոյ, որ կը պարունակէ բարոյական գեղեցիկ պատմութիւններ, նկարագրութիւններ և տոհմային սովորութիւններ, պարեր ու խաղեր :

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ աղոյ տարիքին յարմարեցած միակ դիւրուոյց քերականութիւնն է պատկերներու վրայ սովորեցնող :

Գին Ա. մասին 50 փաշտ, Բ մասին 100 իսկ Գ մասին 4 դրուշ :

Կեդրոնատեղին է ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ, Մէրճան փողոց թիւ 57

ՆԱՅՈՒ ԱՂԶԻԿ

Անշուշտ ընթերցող ազգարիկներս և քու-
րիկներս կը ներեն ինձ երբ ըսեմ թէ՛ վեր-
ջին մէկ երկու շաբաթներուն այնքան ցայ-
տուն կերպով աչքիս դարկաւ մեր ազնուու-
նի օրիորդներուն տգեղ կողմերը որ ստիպ-
ուեցայ անոնցմէ մի քանին Պատ. «Հանրա-
գիտակ»-ի միջոցաւ հրատարակելու՝ միշտ
սա՛ հաստատ համոզումով թէ այս յօդուա-
ծիս ամէն մէկ բառը մեծ ճշմարտութիւն մը
կը պարունակէ իր մէջը :

Բայց սկսելէ առաջ 000000 անգամ նե-
րողութիւն կը խնդրեմ ազնիւ քոյրերէս, ու
խաչս հանելէ վերջ կ'սկսիմ : Չմոռնամ ըսել
նաեւ թէ բացառութիւնները յարգողներէն
եմ միշտ և յաւիտեան :

Նախ մեր օրիորդներէն շատեր տձե քալ-
ուածք մը ունին. անցեալ օր Բերայի չիտակէն
անցած պահուս հանդիպեցայ անանկ օրիորդի
մը զոր ճանչնալու բարեբաղդութիւնը կամ
աւելի դժբաղդութիւնը չունէի թէն՝ սո-
կայն Հա՛յ ըլլալը վրայէն կը վազէր կոր :
Վայելչօրէն քալելն ալ ուրիշ բան է կարծեմ
հէ՛ :

Մեր ազնուունի օրիորդներէն շատեր ալ
երբեմն duchesseի հովեր կ'աւնեն և եթէ
երբէք պատենութիւնը ունենաւ խօսելու ի
րենց հետ գաղիներէն լեզուն, Աստուած իմ,
ի՛նչ այլանդակութիւններ վաւ զագի լեզուն
ըսելու տեղ վաւ գալիք դեգոն կ'ըսեն (ական-
ջըդ խօսի Լիլա) և ասոր նման ուրիշ ինչնր :
Հապա ասոնց քալուածքը, ամէն մեղքիս
վրայ ալ թեւերին ոչին մէջ լեզանկիւն
մը կաղմած և ձախով՝ կունակնուն ճիշդ
մէջտեղէն (? ! ?) փէշերնին վեր առած :
Հին ալ յոգնիր երանելիները :

20 րդ. դարու ! մեր Հայ օրիորդները՝ քիչ
բացառութեամբ, մասնաւոր ատելութիւն մը
ունին իրենց մայրենի լեզուն հանդէպ, Հայ
լեզունէն առաջ կ'ըսեն Քրտներէնը խօսիլ
ու կարգալ, խեղճ ողորմիկներ . . . այս-
պիսիներուն աղէ՛կ հարուած մը տուած ե-
ղաւ անցեալ օրուան «Մանուսի»-ին մէջ
մեր կին զրոգներէն Օր. Հ. Մ. : Երանի՛ թէ
մեր «Հայու աղջիկներ»ը բան մը սովորին

այդ յօդուածէն, բայց «խեղ խորտան ի՛նչ
ընէ, սեւը տձառն ի՛նչ ընէ» կ'ըսէ առա-
ծը և այս՝ կարծեմ՝ չա՛տ ճշմարիտ է մերի-
ներուն համար :

Հապա մեր Հայ օրիորդներէն ոմանց փո-
ղոցին մէջ պօռալով խօսիլը, որ մարդուն
ջիղերուն կը դաշի. հետեւեալը ճիշտ ու ճիշտ
անցեալ օրուան լսածս է :

— Բա՛ վարդուկ, վարդուկ, սա անց-
նողին միսոյին Ֆարպեյան տեսա՛ր, իմա ալ
ասանկ ընենք նէ ինտո՛ր կ'ըլլայ :

— Աման դուն ալ, ատ ի՛նչ ճաշակ է,
ատ ալ Ֆարպեյան ըլլայ, կեցիր ևս հիմա
քեզի կը ցուցնեմ ինտո՛ր պիտի ընեսնէ՛ ը-
սելով, չիտակ Բարլեմանին առջև կը կենան,
ու ես ալ կամաց մը հետեւելով իրենց՝ բա-
ւական հեռուն կը կենամ :

— Բա՛ վարդուկ, նայէ՛ քիչ մը ա-
ռաջուան ցուցուցածէս չէ՛. ևս ասանկ պի-
տի ընեմ, ի՛նչ կ'ըլլայ թող ըլլայ :

— Աման դուն ալ, ինտո՛ր կ'ըսենէն
անանկ ըրէ, ևս սա շափալիք զարնու-
ցայ, քա՛ քալէ ներս մանանք տէ հարցու-
նենք զինը :

— Բա խենդ ևս ի՛նչ ևս, հոսակի մէկ
շաբաթն չորս հինգ ոսկի է, չորս հինգ մէ-
ծիայէ ունի՞ս քովդ :

— Աման խըյ ոնէք դուն ալ, հիչ մէկ
բանիս հա՛ չես ըսեր կոր, քալէ չէնէ խուլի
խաբոս երթանք տէ հոն կարելի է կը դըտ-
նենք՝ ըսելով դէպի հոն կը վազեն, որով
ևս ալ կ'աղաախմ այս սիրտ խառնուածք խօ-
սակցութիւնէն :

Ի մէջ այսոց պէտք է խոստովանինք նաեւ
որ մեր ազնուունի օրիորդներէն շատերուն
է՛ն սիրական օրերը՝ կիրակին և մանաւանդ
հինգշաբթին եղած են միշտ, քանի որ այդ
օրերուն է որ ընդհանրապէս en grand toilette . .
եկեղեցի կը դիմեն Երանելի՛ ուխտաւորներու
վերջին բան մըն ալ եթէ կը հաճիք :

Մեր ազնիւ օրիորդներէն շատերուն է՛ն
սիրելի ասպարէզը ուսուցչուհիութիւնը եղած
է միշտ : Որքան ալ կը սիրեն այդ ասպա-
րէզը :

Ար՛ի՛ կը հարցնեմ մեծայարդ ընթերցող-
ներուս և ունիներուս թէ՛ այս մի քանի դի-
տողութիւնները «Հայու աղջիկը» չե՛ն յատ-
կանէր միթէ :

Գիտեմ աղնուռնի քուրիկներս, այս տողերը կարդալով ինձ դէմ չափազանց բարկացած կրակ պիտի կտորին, բայց ճիշդ այդ պահուն աղէ՛կ կ'ըլլայ կարծեմ եթէ ուղղակի դիմեն . . . քայալսին :

Մենք ալ կոչու ! սեռին պատկանողներս պիտի ուղէինք գիտնալ մեր սխալները — այս մասին մի քանի սեռակիցներու հաւանութիւնը առած եմ — եթէ սակայն օրիորդ մը հաճէր երեսնիս զարնել զանոնք :

Յտեաութիւն ուրիմն :

ՊԵՏԻՆ

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Անուրանալի ճշմարտութիւն մըն է որ թերութիւնը, նոյն իսկ բնական ըլլայ ան, մարդ վրան չառներ : Աւտու մը կանուխ միակնի մը և կուղ մը իրարու կը հանդիպին և որովհետեւ երկուքն ալ իրարմէ ծածկել կուղեն իրենց բնական թերութիւնը, կուրը կըսէ .

— Բարեկամ, չեմ գիտեր ի՞նչ եղաւ այս առտու . սա աչքիս մէկ հատը բնա՛ւ չի բացուիր կոր :

— Պատճառը թէ ևս ալ չեմ գիտեր կը պատասխանէ կուղը, սակայն եթէ քուկինդ ալ իմինիս պէս առտուն կանուխ սա ծրարը կունակդ տուած տունէն դուրս ըրած ըլլար քեզի, անանկ մէկ աչքէ չէ, երկուքն ալ դուրս իյնալու աստիճան կը բացուէին :

* * *

Երկար ատեն տունը մնացած աղջիկ մը վերջապէս կը գտնէ իր ձեռքը խնդրող մը ու կը նշանուի : Օր մը երբ այս երկու սիրակցորդ արարածները — մինակ մնացած — ասկէ անկէ խօսիլ կսկսին, աղջիկը կը հարցընէ .

— Սիրելիս, հօրմէս ինձի ուղած ժամանակդ ի՞նչ ըսաւ .

— Ի՞նչ պիտի ըսէ, անուշի՛կս, Աստուած բանդ յաջողէ ըսաւ :

2. Մ.

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շուիլ եւ ադամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կահաւորներ կոկել ամէն կերպով, առանց քսակնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես, աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՛. Օրիորդ ես, շիք և աժան հագուել կուզես՝ դիմէ՛. Երիտասարդ ես և շիքը կը սիրես՝ դիմէ՛. Տարեց ես և ցուրտէն պատասխարուիլ կուզես՝ դիմէ՛. Տղաքներ ունիս որոնց պիտոյք զանկդ կը ծածկեն՝ դիմէ՛. Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ՛. Եկածը Կարանդ, է՛ նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ՛... Տարին քանի մը պնգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛. Զեռքդ պարսպ ճամբայ քալել չի՞ս սիրեր՝ դիմէ՛. Կուզե՞ս տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ՛. Առաջնակարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ՛. Կուզես շիք . ճաշակաւոր և լաւ տեսակ մոդկապներ ունենալ՝ վերջապէս կուզես՝ ոտից ցլուխ հագուել, շքուիլ, պնտուիլ

դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, Գուշուսճըլար փողոց թիւ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի, ճերմակեղէնի, ֆանթէզիի, ադամանդի, ժամացոյցներու, շղթաներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ և մնացեալ գումարին հարիւրին 5ը չաբաթական վճարմամբ .


2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց անվնաս մնացած ըլլան, հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախուած և անվնաս մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով ետ կ'առնուին :

ՍԱԿԱՐԿՈՒԹԵՒՆ ԶԿՍ.Յ.

20—30

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ



Մեծ-Պահոց օրերն այս ցամաք ու չոր
 Երբ Բարկենդանեն վերջ հրատոչո՛ւր
 Վարագոյրներով սեւ, սգապաս կամ,
 Յիսուսի բաղման կարծես ի պատգամ,
 Նկան ցրձասիկ փակել երփներանգ
 Մեր եկեղեցեաց դուռներն ու խորանք,
 Ու մեր ամենուս արտերն ու հոգին,
 Ապաշխարութեան ցաւովն ահագին,
 Զգեցան մի սեւ պատմութեան եւ միտ
 Ունեցան անուշ հոգեկան մի միտ,
 Ոչ ոք անցընել կրնար ապաքին,
 Գանկին մէջ հաստատ յոռեսես մրսքին,
 Թէ բարի Աստուածն երկնից բովանդակ
 Մեր Տիեզերքին մէջ նրբախնդակ,
 Բարիքի դուռներ պիտի բանայ, որ
 Իրենց գեղեցիկ կազմով բանաւոր
 Շարժելով կարծես, ի գորով, ի գուր
 Պիտի գան սրփով, համարութեան յօգուտ
 Մեր հաստատութեանց ամուլ, անաւիկ,
 Գումարներ comptant եւ ո՛չ ապաւիկ.
 Ոչ ոք անցընել կրնար ապաքին
 Գանկին մէջ հաստատ յոռեսես մրսքին
 Թէ Հայ Քիլիկեան տիկին մը Սանդուխտ,
 Իր խղճի ձայնին խիտ հրնազանդ, ուլիս
 Ըրած է յարգել յիշատակն անուշ
 Ամուսնոյն, եւ արդ ամելով զայն յուշ,
 Ուրախ եւ զուարթ, հոգիով մ'ալ հեզ
 Զորս հազար ոսկի, պիտ'նուիրէ մեզ,
 Զի Հիւանդանոցն՝ իբր մէկ ընծայ,
 Իւրացընելով զայն յաւեց ցընծայ,
 Գումար մ'արդարեւ հրսկայ, որով այն
 Պարտաւորեմք իր մեծ որովայն
 Թէ Պօլսո փառան ալ Նուպար մէկանց
 Իբր անգուգական բարեբար մէկ անձ
 Մէկ միլիոն ծրանք պիտի տայ Ազգին
 Որպէսզի շինուի դրայրոյ մ'ահագին,
 Եւ արուեստասէնչ մեր խեղճուկ չղափ
 Գահիրէի մէջ, — բարեբար փաղափ —
 Ուսանին հերկել ու ցանել զարին,
 Են կամ, աղէկը ճանչնալ շաւարին:
 Այս դուռներն էին որոնք, մեզ հանդէպ
 Բացուեցան ահա, շրջե՛ղ, բարեղէպ,

Եւ հայրայրեցին ինձ ալ նոյս մի նիւթ
 Զոր հաղորդեցի ձեզ en une minute:
 Բայց լրագրութեան մէջ որովհետեւ
 Կանոն մ'է եղած ալ այսուհետեւ,
 Շնորհաւորել անոնք որ կ'ուզեն
 — Փոխան վասնելու ի վնաս կամ ի զեն —
 Իրենց դրամով սասարել արանց
 Մեր բազմակարօս մեծ հաստատութեանց,
 Այս երկուքն ալ, ո՛հ, կը շնորհաւորենք
 Իբր յարգող մէկ անձ այս չըմա՛ղ օրեմք:

Հիմա որ բարեաց այս յանգապատում,
 Լուրերն առքեցին Զեզ խիհոյ մ'անպատում,
 Եւ պէտք է որ դուք գիտնա՛ք դեռ ինչե՛ր
 Սուր ականջներուս մէջսեղ են իջե՛ր,
 Կուտամ ձեզ լուր մ'ալ, բարձ եւ կամ օրեկ
 Առ որ չեմ կարծեր քէ զիս կ'ամօքեմ:

Հիմենեան կուռքին ծխող միտ բուրձառ
 Եւ կարգընելու տենչով խանդավառ
 Պօլսեցի աղջիկ մը հեզ ու բարի
 Ֆիլիպէ փաղէն հոս կը բարբառի
 Թէ տեղոյն երեցն, հովիւ անձնդիր
 Մեր սուրբ ծեսերուն նախանձախնդիր
 Ապաշխարութեան այս վե՛հ օրերուն
 «Ո՛չ կարեմ» կ'ըսէ, զիսով երեւուն
 Դընել իր գլխուն Հիմենեան նարօս
 Որ պիտի լընայ իր արտին կարօս:

Սալմաբօմբուրի Ուսուցիչն աւագ,
 — Որուն մեծ համբաւն Պօլսէն ի Քալաֆ
 Տարածուած, կուտայ արձագանգ ցայտուն
 Իր դպրոցին մէջ նախընթաց առտուն,
 Աղջրկան մը դէմ բարկացած սաստիկ,
 Պատիժ մը կուտայ խիտ չարաբաստիկ,
 Ազդարարելով որ փութանակի,
 — Եթէ չուզեր ծեծ մ'ուտել փանակի, —
 Վերցընէ նակսէն փնջիկն այն վարսի,
 Որ տեսք կուտայ կարծես նոր հարսի:
 Բիւր երկնէ կուտանք այդ մեծ ուսուցչին,
 Որ գաղափարով կ'ապրի դեռ ի Զին:

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի ԹԵՐԹՕՆԸ Ծ

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

ԶՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Մ. Սենթէզ հարցուց իր հաճոյակատար խօսակիցին :

— Մեծ-ծերունի-դարուն , պատրաստ էք սկսելու այս նորօրինակ ճամբորդութեան :

— Միշտ պատրաստ ենք մենք չարժեքու պատասխանեց Մերունի մարդուկը , որովհետեւ ամէն ուր որ գտնուինք մեր տունը կը սեպուի :

— Բառ մըն ալ , վայրկեան մըն ալ : Կատարելապէս հասկցած եմ հիմա տեղի ունեցած արտակարգ դէպքերուն ընթացքը : Այս պատմական եղելութիւնները և փոփոխութիւնները երկրի վրայ , որչափ ալ խելքէ միտքէ չանցած ըլլան , անքնակաւն չեն : Աւելի հետաքրքրուած եմ ձեր մարմնական փոփոխութիւններով և զգայական ծայրայեղ նրբութիւնով , որ հիւանդութիւն է կարծես : Ինչպէս օգնչու էակներ եղած էք , թիւաւոր արարածներու պէս դեռնէն բարձրանալու կարողութեամբ օժտուած , մինչ մենք անխախտ կերպով կապուած ենք հողին :

— Դիւրաւ կը հասկնաք թէ մեր ուղեղը հազարաւոր տարիներէ ի վեր յարատեւ մարդանքի մը տակ այնքան զարգացած է որ ձեզի հրէշային կը թուի : Այս բանը բնութեան մէկ երեւոյթն է , այնպէս չէ :

— Ճշմարիտ է : Ու է գործարան , երբ ժամանակի մը ընթացքին մէջ չգործածուի , կը տկարանայ , կը ձեւափոխուի և վերջապէս կամաց կամաց կը կորսուի : Փոխադարձաբար , մարդկային գործարան մըն ալ երբ անդադար աշխատի , կ'աճի , կը զօրանայ մարմնին միւս մասերը տկարացնելու աստիճան : Ասիկայ մեր ժամանակներն ալ գիտէինք :

— Պարզ է ուրեմն թէ մեզի վերադրուած հիւանդագին նրբազգայութիւնը որ ջիղերու զօրաւոր տիրապետութենէ մը սուս կուգայ , արդիւնքն է նաեւ մեր ուղեղին ազդեցութեան : Ուղեղային մարդիկներ ըլլալով , ինչպէս կը կոչուինք , բնական է որ ջղայիններ ալ ենք : Մեր ուղեղը ձերինն եռապատիկն է առնուազն , հետեւաբար ձենէ եռապատիկ աւելի ջղային ենք մենք ալ : Մեր նախահայրերը սերունդէ սերունդ , դիւրազգածութեան մը ձգտեր են , որ դարերու ընթացքին նրբացեր , կատարելագործուեր է , և զոր մենք ալ կը շարունակենք :

— Այնչափ նրբացեր է որ հասեր է մինչեւ ձեր կազմաւորութեան աննութական գոյն մը ստանալը :

— Ճիշդ բառը գտար նախածին (Մ. Սենթէզ) . աննութացում . . . ահա դէպի այդ է որ կը դիմենք և մեր յաջորդները անտարակոյս պիտի հասնին հոն : Ահա ասոր համար , այս ուղեղային ուռճացման և ջղային ժառանգականութեան համար է որ մեզի համար ամենափոքր խստութեամբ ձայն մը , պարզ աղմուկ մը , անակնկալ մը և յեղակարծ շարժում մը անտանելի են , բաբախում կուտան և կը վրդովեն մեր փափուկ կազմը : Ամեն բան ալ որ մեր շուրջը կը գտնուի , ասոր համեմատ կարգադրուած են : Մեր գերիները , Մաս-Չինները անգամ ցած ձայնով ստիպուած են խօսիլ և բնաւ ու է ճիշտ չարձակել :

— Բայց երբ փոթորիկ ծագի , օրինակի համար :

— Մեր ջիղերուն անըմբռնելի զգայնութիւնը կանխաւ կը տպաւորուի և մեզի կ'ազ-

դարարուի թէ փոթորիկը մօտաւուտ է : Այն ատեն անմիջապէս դեռ մրրիկը չպայթած , կը փախչինք այն տեսակ կէտի մը վրայ ուր երկինքը խաղաղ է :

— Ամէն բանի պատասխան ունիք, Մեծ-ծերունի-պարոն , և անկեղծօրէն կը հիանամ ձեր վրայ : Գալով այդ արտակարգ , ապա չեցողիչ զօրութեան , զայն հոգեկան ուժ պիտի կոչեմ . . . :

— « Հոգեկան ուժ » ըսիք . . . գիտե՞ք թէ , Նախածին , դուք ալ ոչ նուազ հրաշալից էք :

— Ատ ի՞նչ ըսել է Մեծ-ծերունի-պարոն :

— Անոր համար որ մենք ուրիշ յորջորջում չունինք այդ զօրութիւնը որոշելու , որու համար ձեզի կը շնորհաւորեմ :

— Իմ կարգիս , ըսեմ ձեզի թէ մեր ժամանակներուն ալ կարգ մը խորհրդագէտներ կային , ճշմարտապէս օժտուած էակներ որոնք բնութեան մէկ ձիրքով դեանէն վեր բարձրանալու հիանալի յատկութիւնը ունէին . . . :

— Ի՞նչ կըսէք Մ. Սէնթիլ :

— Ծշմարտութիւնը, Մեծ-ծերունի-պարոն : Ծիչդ է որ սակայն այդ յատկութիւնը մընայուն չէր , այլ ժամանակ ժամանակ , և ոչ թէ ձեզի պէս միշտ :

— Է , կը խորհի՞ք որ բոլոր իմ ժամանակակիցներս մի և նոյն աստիճանի վրայ ունին այդ զօրութիւնը : Կը սխալիք Նախածին : Ինչպէս որ ամէն մարդ նոյն հասակը , նոյն դնդերային ուժը , նոյն իմացականութիւնը չունի , այնպէս ալ հոգեկան ուժը հաւասար չէ ամենուն մէջ : Ասիկայ շատ բնական է : Դուք զիս կը հասկնաք կատարելապէս , անոր համար չիտակը սա ծերունի տարիքիս բաղդաւորութիւն մըն է որ հին դարերու միացորդներուն մէջ խօսակից մը կը գտնեմ ձեզի չափ խելացի . դուք ձեր ժամանակէն շատ աւելի առաջ ապրած էք կարծես : Բայց ըսիք ինծի թէ 10,000 տարի առաջ ձեր ժամանակակիցներէն — Մաօ-Չիններէն — ոմանք մեր այս ատանձնայատկութիւնը ունէին . զարմանալի է այդ , քանի որ նոյն իսկ այժմ մեր Մաօ-Չինները բնութեան այդ ձիրքերէն զուրկ են : Կը փափաքիմ գիտնալ թէ ձեր ատենուան « ուղեղային » ներք ո՞րչափ մօտ և ո՞րչափ նման են մեզի :

— Շատ քիչ նման է , շատ հեռու, Մեծ-ծերունի-պարոն : Նախ որ անոնք իրենց գլխու մեծութեամբ տարբերութիւն չունէին միւս մարդոցմէ և շատ տկար աստիճանով ունէին այդ զօրութիւնը , որ այնքան զարգացած է ձեր քով : Այսու հանդերձ իրողութիւնը անհերքելի է : Ոչ միայն 19րդ դարուն , այլ աւելի հին ատենները դոյութիւն ունէին օդին մէջ բարձրանալու կարողութիւն ունեցող մարդիկ , առանց տեսանելի պատճառի , և հոն մնալ և օդին մէջ ծփալ ժամանակ մը առանց ունէլ յենարանի : Այս երեւոյթին ինքնամբարձում անունը կուտայինք : Իմ իսկ աչքովս տեսած եմ Հնդկաստանի մէջ թէ , Բունտիները , այսինքն Լուսակրօն ըսուած տեսակ մը երազատես աղանդաւորներ յամբօրէն կը բարձրանային օդին մէջ , միակ իրենց կամքին ուժովը և հոն կը կենային , ինչպէս ըսիւ Այս մարդիկը իսկապէս տեսական կեանք մը կը վարէին , իրենք իրենց մէջ կ'ընթացուէին , կարելի եղածին չափ կ'անջատուէին արտաքին աշխարհէն և կը բռնադատէին ինքզինքնին աւէն վայրկեան իրենց ջգային զգայնութիւնը գրգռել , իրենց ծանօթ միջոցներով : Շատ մը օրինակներ կրնամ մէջ բերել ձեզի , բայց պիտի ծանրանամ աւելի անոնց վրայ , որոնք գիտական հսկողութեան մը տակ պիտի ունեցած են , հեռու ամէն տեսակ պատրանքէ : Այսպէս , Լոնտոնի Արքայական Ընկերութիւնէն Մ. Բրուքս , հռչակաւոր քիմիաբան մը . . . : Բայց ձեզի կը խօսիմ , Լոնտոնի , Անգլիոյ վրայ , կարծես թէ ինծի ժամանակակից ըլլալիք , այնքան դժուար կ'ըլլայ միտքս պահել անցած դարերու հրաշալի յաջորդութիւնը :

— Խիտ կը հետաքրքրէք ինծի , Նախածին , շատ բարեբաղդ եմ գիտակից ըլլալով թէ մենէ դարեր առաջ կան եղեր ձեզի պէս մարդիկ որոնք կրնան մեզի հասնիլ մտաւորապէս Շարունակեցէք , կ'աղաչեմ :

— Մ. Բրուքս փորձեց պարզ բայց հանճարեղ գործիքներու միջոցաւ չափել և հասկնալ այդ բնութեան օժտուած մարդոց կողմէ առաջ բերուած զօրութիւնը , առանց անոնց զգացնելու և կասկածեցնելու թէ իրենց մարմնէն արտածորող այդ կարողութիւնը կը չափուի : Գիտե՞ք թէ աստիճանաչափ գործիքները չեն սխալիր և վարանուաներու տեղի չեն տար , այնպէս չէ՞ :

— Անտարակոյս :

(Շարունակելի)

ԱՐՏՈՇԱՏԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԵԱՆ

Պապ.Ալի հասէսի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԳՆԱՑ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համան, Թօփալեան խան

Ոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տո-
կունութեամբ և գիներու սնմայելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձեռնառն յատուկ ընտիր հա-
ղուտներու, կանանց քեջրոյններու և
տղայոց շիւք և գիմաղկուն փոքրիւներու
ծրս մթերք մը պատրաստ ունի, որ
չերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հաղուտի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .


Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ է.
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՑԻ ԽԱՌՆՈՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԽԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՑԵՐ

Կ. Պոլիս, Պահճեֆափու, Ճեյալ-Պեյ խան, քիւ 10

Ա Ն Տ Ե Լ Ի Պ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Բ Ա Ր



Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամօֆոնի եւ երկկողմ Բլազներու, Կեդրոնա-տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիր Էֆենտիի կից, Եալսըզ խանի տակ քիւ 2: Մասնաձիւղ Պահճե Գաբու քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ՝ նոր գրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամօֆոններ և երկու կողմն ալ զատ զատ եղանակներով Բլազներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-թեամբ և թէ՛ ափսոսութեամբ: Դաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: